ՀԱՎԵԼՎԱԾ 25

«Եվրասիական
տնտեսական միության
մասին» պայմանագրի

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

գնումների կարգավորման կարգի մասին

I. Ընդհանուր դրույթներ

1. Սույն արձանագրությունը մշակվել է Եվրասիական տնտեսական միության մասին պայմանագրի XXII բաժնին համապատասխան (այսուհետ՝ պայմանագիր) եւ դրանով սահմանվում է գնումների կարգավորման կարգը:

2. Պայմանագրի XXII բաժնում եւ սույն Արձանագրության մեջ օգտագործված հասկացություններն ունեն հետեւյալ նշանակությունները՝

«Համացանցային պորտալ»՝ համացանցում անդամ պետության միասնական պաշտոնական կայքը, որն ապահովում է միասնական վայր՝ գնումների մասին տեղեկատվության հասանելիության համար.

«Պատվիրատու»՝ պետական մարմին, տեղական ինքնակառավարման մարմին, բյուջետային կազմակերպություն, այդ թվում՝ պետական եւ մունիցիպալ հաստատություններ, ինչպես նաեւ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրության համաձայն գնումներ իրականացնող այլ անձինք: Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է նախատեսվել գնումների գործընթացի

կազմակերպչի ստեղծումը (գործելը), որի գործունեությունն իրականացվում է այդ օրենսդրությանը համապատասխան: Ընդ որում, չի թույլատրվում պատվիրատուի՝ գնումների պայմանագիր կնքելու գործառույթների փոխանցումը գնումների գործընթացի կազմակերպչին.

«Գնումներ»՝ պետական (մունիցիպալ) գնումներ, որոնց ներքո հասկացվում են պատվիրատուների կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերում եւ այլ գնումներ բյուջետային միջոցների, ինչպես նաեւ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում այլ միջոցների հաշվին, ինչպես նաեւ գնման պայմանագրերի կատարման հետ կապված հարաբերություններ.

«Գնումների մասին տեղեկատվություն»՝ գնումն իրականացնելու մասին ծանուցագիրը, գնման մասին փաստաթղթերը (այդ թվում՝ գնման պայմանագրի նախագիծը), այդ ծանուցագրերում, փաստաթղթերում կատարվող փոփոխությունները, գնումների մասին փաստաթղթերի վերաբերյալ պարզաբանումները, գնման գործընթացում կազմված արձանագրությունները, գնման ընթացակարգի արդյունքների մասին տեղեկությունները, գնման պայմանագրերի եւ այդ պայմանագրերին կից լրացուցիչ համաձայնագրերի մասին տեղեկությունները, գնման պայմանագրի կատարման արդյունքների մասին տեղեկությունները, գնումների ոլորտում՝ անդամ պետության իշխանության կարգավորող եւ (կամ) հսկող լիազոր մարմիններում ստացված բողոքների, դրանց բովանդակության եւ այդ բողոքներն ուսումնասիրելու արդյունքում ընդունված որոշումների, այդ մարմինների կողմից տրամադրված կարգադրագրերի վերաբերյալ տեղեկությունները: Գնումների մասին տեղեկատվությունը ենթակա է պարտադիր հրապարակման համացանցային պորտալում.

«Ազգային ռեժիմ»՝ ռեժիմ, որով նախատեսվում է, որ անդամ պետություններից յուրաքանչյուրը պետք է գնումների նպատակներով՝ անդամ պետությունների

տարածքներից ծագող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների, այդպիսի ապրանքներ առաջարկող, աշխատանքներ իրականացնող եւ ծառայություններ մատուցող՝ անդամ պետությունների մատակարարների եւ հնարավոր մատակարարների համար ապահովի ոչ պակաս բարենպաստ ռեժիմ, քան այն ռեժիմը, որն ապահովել է իր պետության տարածքից ծագող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների, ինչպես նաեւ այդպիսի ապրանքներ տրամադրող, աշխատանքներ կատարող եւ ծառայություններ մատուցող մատակարարների ու հնարավոր մատակարարների համար: Ապրանքի ծագման երկիրը որոշվում է Միության մաքսային տարածքում ապրանքների ծագման երկրները որոշելու համար սահմանված կանոնների համաձայն.

«Էլեկտրոնային առեւտրային հարթակի (էլեկտրոնային հարթակի) օպերատոր»՝ իրավաբանական անձ կամ ձեռնարկատիրական գործունեություն իրականացնող ֆիզիկական անձ, որը, անդամ պետության օրենսդրությանը համապատասխան, տնօրինում է էլեկտրոնային առեւտրային հարթակը (էլեկտրոնային հարթակը), դրա գործարկման համար անհրաժեշտ ծրագրա-ապարատային միջոցները եւ (կամ) ապահովում է դրա գործարկումը.

«Մատակարար»՝ անձ, որը մատակարար, կատարող կամ կապալառու է եւ որի հետ կնքվել է գնման պայմանագիր.

«Հնարավոր մատակարար»՝ ցանկացած իրավաբանական կամ ֆիզիկական անձ (այդ թվում՝ անհատ ձեռնարկատեր).

«Էլեկտրոնային առեւտրային հարթակ (էլեկտրոնային հարթակ)»՝ կայք համացանցում, որը որոշվել է անդամ պետության գնումների օրենսդրությամբ սահմանված կարգով էլեկտրոնային ձեւաչափով գնումների իրականացման համար: Ընդ որում՝ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է սահմանվել, որ համացանցային պորտալն է էլեկտրոնային առեւտրային հարթակ

(էլեկտրոնային հարթակ), ինչպես նաեւ պետք է որոշվի էլեկտրոնային առեւտրային հարթակների (էլեկտրոնային հարթակների) սահմանափակ քանակը.

«Գնումների էլեկտրոնային ձեւաչափ»՝ գնումների ընթացակարգ, որն իրականացվում է համացանցի, համացանցային պորտալի եւ (կամ) էլեկտրոնային առեւտրային հարթակի միջոցով, ինչպես նաեւ ծրագրա-ապարատային միջոցներով:

3. Սույն Արձանագրությունը կիրառելիս, եթե անդամ պետության օրենսդրության դրույթներից չի հետեւում սույն Արձանագրությամբ սահմանված իմաստներից տարբերվող իմաստ, ապա չի պահանջվում անդամ պետության օրենսդրության համապատասխանեցում սույն Արձանագրությանը:

II. Գնումների ոլորտին ներկայացվող պահանջները

4. Անդամ պետություններում գնումներն իրականացվում են հետեւյալ եղանակներով՝

բաց մրցույթ, որով կարող է նախատեսվել, այդ թվում՝ երկփուլ ընթացակարգեր եւ նախաորակավորման ընտրություն (այսուհետ՝ մրցույթ),

գնային առաջարկների հարցում (գնանշումների հարցում),

առաջարկների հարցում (եթե դա նախատեսված է անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ),

բաց էլեկտրոնային աճուրդ (այսուհետ՝ աճուրդ),

բորսային առեւտուր (եթե դա նախատեսված է անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ),

գնումներ մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից):

Անդամ պետություններն ապահովում են էլեկտրոնային ձեւաչափով մրցույթի եւ աճուրդի անցկացումն ու գնումների այլ եղանակներ իրականացնելիս ձգտում են անցում կատարել էլեկտրոնային ձեւաչափին:

5. Մրցույթի անցկացման միջոցով կատարվող գնումներն իրականացվում են՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 1-ին հավելվածի 1-4-րդ կետերով նախատեսված պահանջները:

6. Գնային առաջարկների հարցում (գնանշման հարցում) անցկացնելու միջոցով կատարվող գնումներն իրականացվում են՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 1-ին հավելվածի 5-րդ կետով նախատեսված պահանջները:

7. Առաջարկների հարցում անցկացնելու միջոցով կատարվող գնումներն իրականացվում են սույն Արձանագրության 1-ին հավելվածի 6-րդ կետով նախատեսված պահանջներին համապատասխան՝ սույն Արձանագրության 2-րդ հավելվածով նախատեսված դեպքերում, ինչպես նաեւ սույն Արձանագրության 3-րդ հավելվածի 10-րդ, 42-րդ, 44-րդ, 47-րդ, 59-րդ եւ 63-րդ կետերով նախատեսված դեպքերում, եթե դա նախատեսված է անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ:

8. Աճուրդի անցկացման միջոցով կատարվող գնումներն իրականացվում են՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 1–ին հավելվածի 7-րդ եւ 8-րդ կետերով նախատեսված պահանջները՝ սույն Արձանագրության 4–րդ հավելվածին համապատասխան:

Անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրության մեջ սահմանել ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների առավել ընդլայնված ցանկ, որի մասով կատարվող գնումներն իրականացվում են աճուրդի անցկացման միջոցով:

9. Ապրանքային բորսայում կարող են իրականացվել բորսային ապրանքների (այդ թվում՝ սույն Արձանագրության 4-րդ հավելվածով նախատեսված ապրանքների) գնումներ:

Անդամ պետությունն իրավունք ունի իր օրենսդրության մեջ սահմանելու այն ապրանքային բորսաները, որտեղ կարող են իրականացվել գնումները:

10. Մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) կատարվող գնումներն իրականացվում են սույն Արձանագրության 3–րդ հավելվածով նախատեսված դեպքերում՝ հաշվի առնելով սույն Արձանագրության 1–ին հավելվածի 10-րդ կետում նշված պահանջները:

Անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրության մեջ կրճատելու սույն Արձանագրության 3–րդ հավելվածով նախատեսված ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ցանկը:

11. Անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրության մեջ միակողմանիորեն սահմանելու գնումների իրականացման այն առանձնահատկությունները, որոնք կապված են, նախքան գնումների իրականացման ավարտը, հնարավոր մատակարարների մասին տեղեկատվության գաղտնիությունը պահպանելու անհրաժեշտության հետ, ինչպես նաեւ բացառիկ դեպքերում՝ 2 տարուց ոչ ավելի ժամկետով՝ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների առանձին տեսակների գնումների իրականացման առանձնահատկությունները:

Այդպիսի առանձնահատկությունների սահմանման առնչությամբ ընդունված որոշումները եւ գործողություններն ընդունվում են սույն Արձանագրության 32-րդ եւ 33-րդ կետերով նախատեսված կարգով:

12. Գնումները պատվիրատուի կողմից իրականացվում են ինքնուրույն, կամ գնումների գործընթացի կազմակերպչի մասնակցությամբ (այն դեպքում, եթե

անդամ պետության օրենսդրությամբ նախատեսվում է գնումների գործընթացում կազմակերպչի գործունեությունը):

13. Անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ պետք է նախատեսվի անբարեխիղճ մատակարարների ռեեստրի ստեղծում եւ վարում, որում ընդգրկվում են տեղեկություններ՝

այն հնարավոր մատակարարների մասին, որոնք խուսափել են գնման պայմանագիրը կնքելուց,

իրենց հետ կնքված գնման պայմանագրերով ամրագրված պարտականությունները չկատարած կամ ոչ պատշաճ կերպով կատարած մատակարարների մասին,

այն մատակարարների մասին, որոնց հետ պատվիրատուները միակողմանիորեն խզել են գնման այն պայմանագրերը, որոնց կատարման ընթացքում պարզվել է, որ մատակարարը չի համապատասխանում գնման մասին փաստաթղթերում հնարավոր մատակարարների, մատակարարների նկատմամբ սահմանված պահանջներին կամ այդպիսի պահանջներին իր համապատասխանության մասին ներկայացրել է ոչ հավաստի տեղեկություններ, որը նրան թույլ է տվել դառնալ հաղթող այն գնումների ընթացակարգում, որի արդյունքների հիման վրա կնքվել է այդպիսի պայմանագիր:

Անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ կարող է նախատեսված լինել, որ անդամ պետության անբարեխիղճ մատակարարների ռեեստրում ներառվեն տվյալներ՝ դրանցում ընդգրկված անձանց հիմնադիրների, կոլեգիալ գործադիր մարմինների անդամների, միանձնյա գործադիր մարմնի գործառույթներ իրականացնող անձանց մասին:

Սույն կետի երկրորդից չորրորդ պարբերություններով նախատեսված տեղեկությունների հաստատման (փաստերի սահմանման) դեպքում անբարեխիղճ

մատակարարների ռեեստրում ընդգրկումն իրականացվում է 2 տարով՝ դատարանի եւ (կամ) անդամ պետության պետական իշխանության՝ գնումների ոլորտում կարգավորող եւ (կամ) հսկող լիազոր մարմնի որոշման հիման վրա:

Այն անձը, որի մասին տեղեկությունները ներառվել են անբարեխիղճ մատակարարների ռեեստրում, իրավունք ունի դատական կարգով բողոքարկելու տվյալ ռեեստրում ներառված լինելու փաստը:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են նախատեսվել բացառություններ, որոնք, մասնավորապես, վերաբերում են անբարեխիղճ մատակարարների ռեեստրում սույն Արձանագրության 3-րդ հավելվածի 1-ին եւ 6-րդ կետերին համապատասխան սահմանված հնարավոր մատակարարների եւ մատակարարների ընդգրկմանը:

14. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են նախատեսվել գնումներին մասնակցությունը թույլատրելու պատվիրատուի իրավունքը կամ պարտականությունը՝ ելնելով տվյալ պետության եւ (կամ) այլ անդամ պետությունների անբարեխիղճ մատակարարների ռեեստրում պարունակվող տեղեկություններից:

15. Անդամ պետությունները սահմանափակում են գնումներին մասնակցությունը՝

1) հնարավոր մատակարարների եւ մատակարարների նկատմամբ իրենց օրենսդրություններին համապատասխան ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների առանձին տեսակներ գնելիս լրացուցիչ պահանջներ սահմանելու միջոցով,

2) սույն Արձանագրությամբ սահմանված այլ դեպքերում:

16. Անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանվում է արգելք՝

1) գնումների պայմանների մեջ հնարավոր մատակարարների եւ մատակարարների նկատմամբ քանակապես անչափելի եւ (կամ) անիրականանալի պահանջների ընդգրկման նկատմամբ,

2) գնումների մասին փաստաթղթերի պահանջներին չհամապատասխանող հնարավոր մատակարարներին գնումներին մասնակցության թույլտվություն տրամադրելու նկատմամբ,

3) գնումների իրականացման ծանուցագրով եւ (կամ) գնումների մասին փաստաթղթերով չնախատեսված հիմքերով հնարավոր մատակարարներին գնումների գործընթացին մասնակցելու թույլտվությունը մերժելու նկատմամբ:

17. Հնարավոր մատակարարներից եւ մատակարարներից գնումների գործընթացին մասնակցության համար վճարի գանձում չի թույլատրվում՝ բացառությամբ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերի:

18. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են սահմանվել հնարավոր մատակարարներին եւ մատակարարներին ներկայացվող պահանջներ՝ գնումներին մասնակցության հայտերի ապահովման, ինչպես նաեւ գնման պայմանագրերի կատարման ապահովման վերաբերյալ:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանվում է գնումներին մասնակցության հայտերի ապահովման չափը եւ ձեւերը, ինչպես նաեւ գնումների պայմանագրի կատարման ապահովումը: Ընդ որում, գնումներին մասնակցության հայտերի ապահովման չափը չի կարող գերազանցել գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի 5 տոկոսը, իսկ գնման պայմանագրի կատարման ապահովման չափը՝ գնման պայմանագրի մեկնարկային

(առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 30 տոկոսը, բացառությամբ այն դեպքի, երբ գնման պայմանագրով նախատեսվում է կանխավճարի վճարում: Այդ դեպքում գնման պայմանագրի կատարման ապահովման չափը պետք է կազմի կանխավճարի չափի 50 տոկոսից ոչ պակասը:

Այն դեպքում, երբ գնման պայմանագիրը պարունակում է մատակարարին կանխավճարի տրամադրման վերաբերյալ պահանջներ՝ մատակարարն իրավունք ունի հրաժարվելու դրանից:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ պետք է սահմանվի գնումներին մասնակցության հայտի եւ գնման պայմանագրի կատարման ապահովման առնվազն 2 եղանակ (ձեւ):

Ընդ որում, որպես գնման մասնակցության հայտի ապահովում եւ գնման պայմանագրի կատարման ապահովում, ընդունվում են նաեւ հետեւյալ միջոցները՝

դրամական միջոցներով երաշխիքային վճար, որը մուտքագրվում է պատվիրատուի բանկային հաշվին կամ, անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված լինելու դեպքում՝ գնումների կազմակերպչի, էլեկտրոնային առեւտրային հարթակի (էլեկտրոնային հարթակ) օպերատորի բանկային հաշվին,

բանկային երաշխիք:

Բանկային երաշխիքների նկատմամբ գնումների նպատակներով ներկայացված պահանջները սահմանվում են անդամ պետության օրենսդրությամբ:

Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ պետք է սահմանվի հնարավոր մատակարարների եւ մատակարարների գնումներին մասնակցության հայտերի ապահովման ու գնումների մասին պայմանագրի կատարման

ապահովման միջոցները ժամանակին վերադարձնելու պահանջ՝ այդպիսի օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքերում:

19. Գնման մասին փաստաթղթերում եւ գնումների իրականացման ժամանակ օգտագործվող այլ փաստաթղթերում չեն ընդգրկվում ապրանքային նշանների, սպասարկման նշանների, ֆիրմային անվանումների, պատենտների, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքի ծագման վայրի, արտադրողի կամ մատակարարի անվանման նկատմամբ պահանջներ կամ դրանց մասին նշումներ, բացառությամբ այն դեպքերի, երբ գնման օբյեկտի հատկանիշների նկարագրության բավարար ճշգրիտ այլ եղանակ չկա (այդպիսի դեպքերում պատվիրատուն գնումների մասին փաստաթղթերում ներառում է հետեւյալ բառերը «կամ համարժեքը (անալոգը)»):

Բացառություն է համարվում գնվող ապրանքի եւ պատվիրատուի կողմից օգտագործվող ապրանքի անհամատեղելիությունը՝ այդպիսի ապրանքների համատեղելիությունն ապահովելու անհրաժեշտության դեպքում (այդ թվում՝ հիմնական (տեղակայված) սարքավորանքի արդիականացումը, կազմալրումն ու համալրումը լրացուցիչ սարքերով):

Պատվիրատուն իրավունք ունի սահմանելու ստանդարտ ցուցանիշներ, պահանջներ, պայմանական նշումներ եւ տերմինաբանություն, որոնք վերաբերվում են գնման օբյեկտի տեխնիկական եւ որակական բնութագրերին, որոնք սահմանվել են տեխնիկական կանոնակարգերով, ստանդարտներով եւ Միության իրավունքը կազմող միջազգային պայմանագրերով ու ակտերով նախատեսված այլ պահանջներով եւ (կամ) անդամ պետության օրենսդրությամբ:

20. Հանձնաժողովի անդամները (այդ թվում՝ մրցույթային, աճուրդային եւ գնանշման) չեն կարող լինել այնպիսի ֆիզիկական անձինք, որոնք անձամբ հետաքրքրված են գնումների արդյունքներով (այդ թվում՝ ֆիզիկական անձինք,

որոնք մրցույթին, աճուրդին, գնային առաջարկների հարցմանը (գնանշման կամ առաջարկների հարցմանը) մասնակցության հայտ են ներկայացրել, մրցույթին, աճուրդին, գնային առաջարկների (գնանշման) կամ առաջարկների հարցմանը մասնակցության հայտ ներկայացրած հնարավոր մատակարարների աշխատողները կամ այն ֆիզիկական անձինք, որոնց վրա կարող են ազդեցություն ունենալ հնարավոր մատակարարները (այդ թվում՝ ֆիզիկական անձինք, որոնք հնարավոր մատակարարների մասնակիցներ (բաժնետերեր) են, նրանց կառավարման մարմինների աշխատողներ եւ հնարավոր մատակարարների վարկատուներ), ինչպես նաեւ գնումների ոլորտում ուղղակի հսկողություն իրականացնող՝ անդամ պետության իշխանության կարգավորող եւ (կամ) հսկող լիազոր մարմինների պաշտոնատար անձինք:

21. Գնման պայմանագիրը պետք է պարունակի հետեւյալ պարտադիր պայմանները՝

1) կողմերի պատասխանատվությունը գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար,

2) վճարման կարգը, ինչպես նաեւ պատվիրատուի կողմից գնման արդյունքի ընդունումը՝ գնման պայմանագրով սահմանված պահանջներին՝ դրա համապատասխանությունը (այդ թվում՝ քանակով, (ծավալով), լրակազմությամբ, որակով) գնահատելու համար:

22. Անդամ պետության օրենսդրության մեջ պետք է նախատեսված լինի արգելք՝

1) գնման պայմանագրում այնպիսի պայմաններ սահմանելու նկատմամբ, որոնք հանգեցնում են հնարավոր մատակարարների եւ մատակարարների թվի սահմանափակմանը՝ այդ օրենսդրությամբ չնախատեսված դեպքերում,

2) պատվիրատուների եւ մատակարարների կողմից իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց միակողմանիորեն հրաժարվելու նկատմամբ, այն դեպքում, երբ մյուս կողմը պատշաճորեն կատարում է գնման պայմանագրով սահմանված իր պարտավորությունները եւ այդ օրենսդրությամբ չնախատեսված դեպքերում,

3) պայմանագրային պարտավորությունների կատարման պայմանները փոփոխելու, այդ թվում՝ գնման պայմանագրի արժեքը փոփոխելու նկատմամբ՝ բացառությամբ այդ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի: Առանց գնման պայմանագրի արժեքի համամասնական նվազեցման չի թույլատրվում նվազեցնել ապրանքների քանակը, աշխատանքների եւ ծառայությունների ծավալը:

23. Անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքերում թույլատրվում է գնման պայմանագիր կնքել մի քանի մատակարարների հետ:

24. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է սահմանվել այնպիսի գնման պայմանագիր կնքելու պահանջ, որը նախատեսում է ապրանքի կամ աշխատանքի գնում, հետագա սպասարկում, պիտանիության ժամկետի ընթացքում շահագործում, մատակարարված կամ օբյեկտների աշխատանքների կատարման արդյունքում ստեղծված ապրանքների վերանորոգում եւ օգտահանում (կենսական պարբերաշրջանի պայմանագիր):

25. Որոշակի գնումների առնչությամբ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է գնման փաստաթղթերի անքակտելի մասը կազմող գնման պայմանագրի նախագծում նախատեսվել դրա կատարման համար լրացուցիչ (այդ թվում՝ գնման օբյեկտի հետ կապ չունեցող) պայմաններ ներառելու անհրաժեշտություն:

26. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է հնարավոր մատակարարի եւ (կամ) մատակարարի համար նախատեսվել գնման

պայմանագրով սահմանված բոլոր համակատարողների եւ ենթակապալառուների մասին պատվիրատուին տեղեկատվություն տրամադրելու պարտականություն:

27. Անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ կարող է նախատեսվել գնման պայմանագրի բանկային ուղեկցում:

28. Անդամ պետությունները ձգտում են մինչեւ 2016 թվականն անցում կատարել էլեկտրոնային ձեւաչափով գնման պայմանագրերի կնքմանը:

29. Անդամ պետություններն ապահովում են գնումների մասին տեղեկատվության բաց լինելը եւ թափանցիկությունը, այդ թվում՝

1) յուրաքանչյուր անդամ պետության կողմից համացանցային պորտալի ստեղծման միջոցով,

2) համացանցային պորտալում գնումների մասին տեղեկատվության, անբարեխիղճ մատակարարների ռեեստրի հրապարակման միջոցով (այդ թվում՝ ռուսերենով),

3) համացանցային պորտալում գնումների ոլորտում անդամ պետության նորմատիվ իրավական ակտերի հրապարակման միջոցով (այդ թվում՝ ռուսերենով),

4) էլեկտրոնային առեւտրային հարթակների (էլեկտրոնային հարթակ) սահմանափակ քանակ սահմանելու եւ (կամ) էլեկտրոնային ձեւաչափով գնումների մասին տեղեկատվության եւ այդպիսի գնումների հետ կապված էլեկտրոնային ծառայությունների հասանելիության համար միասնական վայր ապահովող համացանցային պորտալ սահմանելու միջոցով՝ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում,

5) համացանցային պորտալում հրապարակվող՝ գնումների մասին տեղեկատվությունից, անբարեխիղճ մատակարարների ռեեստրից եւ գնումների ոլորտում անդամ պետության նորմատիվ իրավական ակտերից անարգել եւ անվճար

օգտվելը կազմակերպելու, ինչպես նաեւ այդպիսի տեղեկատվության, ռեեստրի եւ ակտերի հետ կապված տեղեկությունների առավելագույնս ընդգրկուն որոնումն ապահովելու միջոցով:

III. Ազգային ռեժիմը եւ դրա ապահովման առանձնահատկությունները

30. Անդամ պետություններից յուրաքանչյուրը մյուս անդամ պետությունների տարածքներից ծագող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների, ինչպես նաեւ այդպիսի ապրանքներ, աշխատանքներ եւ ծառայություններ առաջարկող մյուս անդամ պետությունների հնարավոր մատակարարների եւ մատակարարների առնչությամբ ապահովում է ազգային ռեժիմ գնումների ոլորտում:

31. Անդամ պետությունն իրավունք ունի գնումների մասին իր օրենսդրությամբ սահմանված միակողմանի կարգով բացառիկ դեպքերում սահմանելու ազգային ռեժիմից բացառություններ՝ 2 տարուց ոչ ավելի ժամկետով:

32. Անդամ պետության պետական իշխանության՝ գնումների ոլորտը կարգավորող եւ (կամ) հսկող լիազոր մարմինը նախապես, սակայն ոչ ուշ, քան սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան բացառություններ սահմանելու մասին ակտն ընդունելուց 15 օրացուցային օր առաջ գրավոր ծանուցում է Հանձնաժողովին եւ անդամ պետություններից յուրաքանչյուրին՝ նման ակտ ընդունելու մասին՝ տրամադրելով նաեւ դրա ընդունման անհրաժեշտության հիմնավորումը:

Այդպիսի ծանուցագիր ստացած անդամ պետությունը կարող է դիմել այն ուղարկած մարմնին՝ առաջարկելով անցկացնել համապատասխան խորհրդակցություններ:

Նշված ծանուցագիրն ուղարկած անդամ պետությունը չի կարող մերժել խորհրդակցություններ անցկացնելու առաջարկը:

33. Հանձնաժողովն իրավունք ունի ընդունելու որոշում անդամ պետության կողմից սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան ընդունված՝ բացառումներ սահմանելու վերաբերյալ ակտը չեղարկելու անհրաժեշտության մասին՝ այդ ակտն ընդունելու օրվանից 1 տարվա ընթացքում:

Հանձնաժողովի կողմից նշված ակտը չեղարկելու անհրաժեշտության մասին որոշում ընդունելու դեպքում՝ որոշումն ընդունած անդամ պետությունը 2 ամսվա ընթացքում ապահովում է ակտում համապատասխան փոփոխությունների կատարումը (այն ուժը կորցրած ճանաչելը):

Հանձնաժողովի կողմից սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան ակտերի ընդունման մասին ծանուցագրերի եւ դրանք չեղարկելու հարցերով անդամ պետությունների դիմումների ուսումնասիրությունը, ինչպես նաեւ Հանձնաժողովի կողմից այդ ակտերը չեղարկելու անհրաժեշտության մասին որոշումների ընդունումն իրականացվում է Հանձնաժողովի կողմից սահմանված կարգով:

Եթե սույն Արձանագրության 31-րդ կետին համապատասխան ընդունված ակտը չեղարկելու անհրաժեշտության մասին Հանձնաժողովի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում այն անդամ պետությունը, որի առնչությամբ կայացվել է նշված որոշումը, չի կատարում այն, ապա մյուս անդամ պետություններից յուրաքանչյուրը միակողմանիորեն իրավունք ունի ազգային ռեժիմը չտարածելու այդ անդամ պետության վրա: Այդ մասին ծանուցագիրն անհապաղ ուղարկվում է Հանձնաժողով եւ անդամ պետություններից յուրաքանչյուրին:

34. Այն դեպքում, երբ անդամ պետությունը չի կատարում Պայմանագրի XXII բաժնով եւ սույն Արձանագրությամբ նախատեսված պարտավորությունները, մյուս անդամ պետություններն իրավունք ունեն դիմելու Հանձնաժողովին: Հանձնաժողովը խնդրի ուսումնասիրության արդյունքում ընդունում է հետեւյալ որոշումներից որեւէ մեկը՝

խախտման փաստի բացակայության մասին,

խախտման փաստի ընդունման եւ բացահայտված խախտումը անդամ պետության կողմից վերացնելու անհրաժեշտության մասին:

Եթե բացահայտված խախտումը վերացնելու անհրաժեշտության մասին որոշում ընդունելու օրվանից 2 ամսվա ընթացքում լրանալը անդամ պետությունը, որի առնչությամբ կայացվել է նշված որոշումը, չի կատարում այն, ապա մյուս անդամ պետություններից յուրաքանչյուրը միակողմանիորեն իրավունք ունի ազգային ռեժիմը չտարածելու այդպիսի անդամ պետության վրա:

Այդ մասին ծանուցագիրն անհապաղ ուղարկվում է Հանձնաժողով եւ անդամ պետություններից յուրաքանչյուրին:

IV. Գնումներին մասնակցության ժամանակ անձանց իրավունքների եւ օրինական շահերի պաշտպանությունը

35. Կողմերից յուրաքանչյուրը միջոցներ է ձեռնարկում գնումների մասին իր օրենսդրության խախտման դեպքերի կանխման, բացահայտման եւ կանխարգելման համար:

36. Գնումների ոլորտում անձանց ապահովվող իրավունքների եւ օրինական շահերի ծավալը սահմանվում է Պայմանագրի XXII բաժնով, սույն Արձանագրությամբ եւ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ:

37. Գնումների ոլորտում անձանց իրավունքների եւ օրինական շահերի ապահովման, ինչպես նաեւ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրության պահպանման նկատմամբ հսկողություն իրականացնելու նպատակներով անդամ պետություններից յուրաքանչյուրն իր օրենսդրությանը համապատասխան, ապահովում է անդամ պետության պետական իշխանության՝ գնումների ոլորտը կարգավորող եւ (կամ) հսկող լիազոր մարմինների առկայությունը: Ընդ որում՝ թույլատրվում է այդ գործառույթների կատարումը մեկ մարմնի կողմից, որի իրավասության մեջ մտնում են, այդ թվում՝

1) գնումների ոլորտում հսկողության իրականացումը (այդ թվում՝ ստուգումներ անցկացնելու միջոցով).

2) պատվիրատուների, գնումների կազմակերպիչների, էլեկտրոնային առեւտրային հարթակների (էլեկտրոնային հարթակների) օպերատորների, համացանցային պորտալների օպերատորների, առեւտրային բորսաների, հանձնաժողովների եւ գնումների իրականացման ժամանակ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությունը խախտող այլ անձանց կապակցությամբ ստացված բողոքների եւ դիմումների ուսումնասիրությունը: Ընդ որում՝ ցանկացած հնարավոր մատակարար, ինչպես նաեւ այլ անձ իրավունք ունի անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանված կարգով բողոքարկելու պատվիրատուների, գնումների կազմակերպիչների, էլեկտրոնային առեւտրային հարթակների (էլեկտրոնային հարթակների) օպերատորների, համացանցային պորտալների օպերատորների, առեւտրային բորսաների, հանձնաժողովների եւ գնումների իրականացման ժամանակ այլ անձանց որոշումները եւ գործողությունները (անգործությունը), որոնք ընդունվել են (կատարվել են) նախքան գնումների գործընթացում մասնակցության հայտը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալը.

3) անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրության խախտման դեպքերի կանխումը եւ բացահայտումը, ինչպես նաեւ նշված խախտումների վերացմանն ուղղված միջոցների ձեռնարկումը (այդ թվում՝ այդ խախտման դեպքերի վերացման վերաբերյալ պարտադիր կատարման հանձնարարական տալու եւ նման խախտումների համար մեղավոր անձանց պատասխանատվության ենթարկելու միջոցով).

4) անբարեխիղճ մատակարարների ռեեստրների կազմումը եւ վարումը:

V.Գնումների արդյունավետությունը բարձրացնող եւ սոցիալական գործառույթների իրականացմանն ուղղված միջոցների ապահովումը

38. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանվում է գնումների գործընթացը ծրագրելու պահանջ:

39. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են նախատեսվել գնումների արդյունավետությունը բարձրացնող հետեւյալ նորմերը՝

1) գնումների նորմավորում՝ գնվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների նկատմամբ (այդ թվում՝ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների սահմանային արժեքի նկատմամբ) պահանջներ եւ (կամ) պատվիրատուների գործառույթներն ապահովելու համար նորմատիվ ծախսեր սահմանելու միջոցով,

2) հանրային հսկողության եւ գնումների վերաբերյալ հանրային քննարկումների իրականացում,

3) հակագնագցման միջոցների կիրառում,

4) փորձագետների, փորձագիտական կազմակերպությունների ներգրավում:

40. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված դեպքերում եւ կարգով գնումներ իրականացնելիս քրեակատարողական համակարգի հաստատությունների եւ հիմնարկների, հաշմանդամների կազմակերպությունների, փոքր եւ միջին ձեռնարկատիրության սուբյեկտների, ինչպես նաեւ սոցիալական ուղղվածություն ունեցող ոչ առեւտրային կազմակերպությունների համար կարող են սահմանվել առավելություններ:

Պատվիրատուն գնումների անցկացման ծանուցագրում եւ գնումների մասին փաստաթղթերում կատարում է նշում այդ առավելությունների մասին:

41. Իրավակիրառ պրակտիկայի առավել արդիական խնդիրներ քննարկելու, տեղեկության փոխանակման, օրենսդրության կատարելագործման եւ ներդաշնակեցման, գնումների ոլորտում մեթոդական նյութերի համատեղ մշակման համար Հանձնաժողովը անդամ պետության պետական իշխանության՝ գնումների ոլորտը կարգավորող եւ (կամ) հսկող լիազոր մարմնի հետ միասին, ղեկավարների եւ փորձագետների մակարդակով անցկացնում է խորհրդակցություններ՝ ոչ պակաս, քան տարին 3 անգամ:

Հավելված 1

«Գնումների կարգավորման
կարգի մասին»
արձանագրության

Պահանջներ

մրցույթի կազմակերպման եւ անցկացման, գնային առաջարկների հարցման (գնանշման հարցման), առաջարկների հարցման, աճուրդի եւ մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից) գնումների կատարման նկատմամբ

1. Մրցույթն անցկացվում է էլեկտրոնային ձեւաչափով, որը, մասնավորապես, նախատեսում է մրցույթում մասնակցության հայտերը էլեկտրոնային փաստաթղթի ձեւով ներկայացնելը:

Մրցույթի հաղթող է ճանաչվում այն հնարավոր մատակարարը, որը գնման պայմանագրի կատարման լավագույն պայմաններն է առաջարկել:

Ոչ օբյեկտիվ եւ (կամ) ոչ կառավարելի ձեւով անդամ պետության գնումների մասին օրենսդրությանը չհամապատասխանող մատակարարի ընտրության հանգեցնող գնահատման չափորոշիչներ, ինչպես նաեւ գնահատման կարգ սահմանելը եւ մրցույթին մասնակցության հայտերը համադրելը չի թույլատրվում:

2. Մրցույթն իրականացվում է՝ հաշվի առնելով հետեւյալ պահանջները՝

1) մրցույթային փաստաթղթերի հաստատում,

2) մրցույթային հանձնաժողովի կազմի հաստատում,

3) համացանցային պորտալում մրցույթի անցկացման մասին ծանուցագրի եւ մրցույթային փաստաթղթերի հրապարակում (տեղադրում)՝ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 15 օրացուցային օր առաջ: Մրցույթի իրականացման մասին ծանուցագրում եւ (կամ) մրցույթային փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում՝ մրցույթում մասնակցության հայտեր ներկայացնելու ժամկետը երկարաձգվում է այնպես, որ կատարված փոփոխությունները համացանցային պորտալում հրապարակելու (տեղադրելու) օրվանից մինչեւ մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածը կազմի առնվազն 10 օրացուցային օր: Ընդ որում, գնման պայմանագրի առարկայի փոփոխություն չի թույլատրվում,

4) մրցույթային փաստաթղթերի դրույթների պարզաբանում եւ այդպիսի պարզաբանումների հրապարակում (տեղադրում) համացանցային պորտալում՝ ոչ ուշ, քան մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 3 օրացուցային օր առաջ: Հարցման հիման վրա մրցույթային փաստաթղթերի դրույթների պարզաբանումն իրականացվում է այն դեպքում, երբ հարցումն ստացվում է ոչ ուշ, քան մրցույթում մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 5 օրացուցային օր առաջ,

5) էլեկտրոնային փաստաթղթի ձեւով մրցույթին մասնակցության հայտերի ներկայացում էլեկտրոնային առեւտրային հարթակ (էլեկտրոնային հարթակ) եւ (կամ) համացանցային պորտալ,

6) մրցույթին մասնակցության հայտերի բացում, ուսումնասիրություն մրցույթային հանձնաժողովի կողմից՝ մրցույթին հնարավոր մատակարարների մասնակցությունը թույլատրելու նպատակով մրցույթային փաստաթղթերի պահանջներին համապատասխանող հայտերը որոշելու համար,

7) մրցույթին մասնակցության հայտերի բացման, ուսումնասիրության եւ մրցույթին հնարավոր մատակարարների մասնակցության թույլատրման վերաբերյալ արձանագրությունների հրապարակում (տեղադրում) համացանցային պորտալում եւ հայտերի բացման, ուսումնասիրության եւ մրցույթին մասնակցելու թույլտվության արդյունքների մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան մրցույթային հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումներ ընդունելու օրվան հաջորդող օրը,

8) մրցույթին մասնակցելու թույլտվություն ունեցող հնարավոր մատակարարների կողմից ներկայացրած՝ մրցույթին մասնակցության հայտերի համադրման գնահատում, ինչպես նաեւ հաղթողի վերաբերյալ որոշման կայացում եւ համապատասխան արձանագրության հրապարակում (տեղադրում) համացանցային պորտալում, այդպիսի գնահատման, համադրման եւ մրցույթի հաղթողի վերաբերյալ որոշման արդյունքների մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան մրցույթային հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումներ ընդունելու օրվան հաջորդող օրը,

9) մրցույթում հաղթող ճանաչված՝ հնարավոր մատակարարի կողմից ներկայացված մրցույթին մասնակցության հայտով եւ մրցույթային փաստաթղթերով սահմանված պայմաններով գնման պայմանագրի կնքում՝ մրցույթում հաղթող ճանաչելու մասին որոշումն ընդունելու օրվանից ոչ շուտ, քան 10 օրացուցային կամ աշխատանքային օր հետո, սակայն ոչ ուշ, քան 30 օրացուցային օր հետո, կամ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում մրցույթը չկայացած ճանաչելու վերաբերյալ որոշման ընդունում: Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նաեւ սահմանվում են պատվիրատուի եւ հնարավոր մատակարարի միջեւ գնման պայմանագիր կնքելու կարգն ու հերթականությունը՝ ելնելով գնման պայմանագրի կատարման համար լավագույն պայմաններ առաջարկած հնարավոր մատակարարի հետ գնման պայմանագիր

կնքելու անհրաժեշտությունից, ինչպես նաեւ պատվիրատուի գործողությունների կարգը՝ մրցույթը չկայացած ճանաչելու դեպքում.

10) էլեկտրոնային առեւտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) եւ (կամ) համացանցային պորտալում մրցույթի արդյունքների մասին տեղեկությունների հրապարակում (տեղադրում) եւ մրցույթի արդյունքների մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան մրցույթային հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումները ընդունելու օրվան հաջորդող օրը:

3. Նախաորակավորման ընտրություն նախատեսող մրցույթ անցկացնելիս կիրառվում են սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված պահանջները՝ հաշվի առնելով հետեւյալ առանձնահատկությունները.

1) մրցույթի հաղթողը որոշվում է նախաորակավորման ընտրություն անցած հնարավոր մատակարարների կազմից.

2) հնարավոր մատակարարների եւ մատակարարների նկատմամբ լրացուցիչ պահանջները կիրառվում են նախաորակավորման ընտրություն կատարելու համար եւ չեն կարող օգտագործվել որպես մրցույթին մասնակցության հայտերի գնահատման եւ համադրման չափորոշիչներ:

4. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում եւ կարգով մրցույթը կարող է անցկացվել երկփուլ ընթացակարգերի կիրառմամբ:

Երկփուլ ընթացակարգերի կիրառմամբ իրականացվող մրցույթի առաջին փուլում միջոցներ են ձեռնարկվում փորձագետի (փորձագիտական հանձնաժողովի) կողմից՝ հնարավոր մատակարարների այն տեխնիկական առաջարկների հիման վրա գնվող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների տեխնիկական մասնագրերը կազմելու համար, որոնք մշակվել են պատվիրատուի տեխնիկական առաջադրանքին համապատասխան:

Երկփուլ ընթացակարգերի կիրառմամբ իրականացվող մրցույթի երկրորդ փուլում ձեռնարկվում են մրցույթին մասնակցության համար նախատեսված միջոցները՝ հաշվի առնելով սույն հավելվածի 1-ին եւ 2-րդ կետերում նշված պահանջները:

5. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ գնային առաջարկների հարցման (գնանշման հարցման) եղանակի կիրառման համար սահմանվում է գնման պայմանագրի սահմանային մեկնարկային (առավելագույն) գինը (գնման կողմնորոշիչ արժեքը), այդ թվում՝ գնումների կարգավորման կարգի մասին արձանագրության 2-րդ եւ 4-րդ հավելվածների համաձայն կազմված ցանկերում ընդգրկված ապրանքներ, աշխատանքներ եւ ծառայություններ գնելիս («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25-րդ հավելված):

Գնային առաջարկների հարցման հաղթող է ճանաչվում այն հնարավոր մատակարարը, որն առաջարկել է գնման պայմանագրի ամենացածր գինը:

Անդամ պետություններից յուրաքանչյուրը ձգտում է գնային առաջարկների հարցման (գնանշումների հարցման) եղանակից անցում կատարել առավելապես աճուրդների անցկացման եղանակին:

Գնային առաջարկների հարցմամբ (գնանշումների հարցմամբ) գնումների իրականացման դեպքում, համացանցային պորտալում հրապարակվում է (տեղադրվում է) դրա անցկացման մասին ծանուցագիր անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, սակայն գնային առաջարկների հարցման (գնանշումների հարցման) մասնակցության հայտ ներկայացնելու ժամկետը լրանալուց առնվազն 4 աշխատանքային օր առաջ:

Հանձնաժողովի արձանագրությունները, որոնք կազմվում են գնային առաջարկների հարցում (գնանշումների հարցում) անցկացնելու ընթացքում, հրապարակվում են (տեղադրվում են) էլեկտրոնային առեւտրային հարթակում

եւ(կամ) համացանցային պորտալում, իսկ գնանշման հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների մասին ծանուցագրերն ուղարկվում են յուրաքանչյուր հնարավոր մատակարարի՝ ոչ ուշ, քան այդ որոշումներն ընդունելու օրվան հաջորդող օրը:

6. Առաջարկների հարցում անցկացնելու միջոցով գնումները կարող են իրականացվել Գնումների կարգավորման կարգի մասին արձանագրության 2-րդ հավելվածով նախատեսված ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների առնչությամբ («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25–րդ հավելված):

Գնային առաջարկների հարցման հաղթող է ճանաչվում այն հնարավոր մատակարարը, որն անդամ պետության գնումների մասին օրենսդրությանը համապատասխան, ներկայացրել է պայմանագրի կատարման լավագույն պայմանները:

Առաջարկների հարցման միջոցով գնումների իրականացման դեպքում, համացանցային պորտալում հրապարակվում է (տեղադրվում է) դրա անցկացման մասին ծանուցագիր անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, սակայն առաջարկների հարցման մասնակցության հայտ ներկայացնելու ժամկետը լրանալուց առնվազն 5 աշխատանքային օր առաջ:

Հանձնաժողովի արձանագրությունները, որոնք կազմվում են առաջարկների հարցում անցկացնելու ընթացքում, հրապարակվում են (տեղադրվում են) էլեկտրոնային առեւտրային հարթակում եւ (կամ) համացանցային պորտալում, իսկ հանձնաժողովի կողմից ընդունված որոշումների մասին ծանուցագրերն ուղարկվում են յուրաքանչյուր հնարավոր մատակարարի՝ ոչ ուշ, քան այդ որոշումներն ընդունելու օրվան հաջորդող օրը:

7. Աճուրդում մասնակցության նպատակով հնարավոր մատակարարները պետք է առնվազն 3 տարի ժամկետով պարտադիր հավաստագրում անցնեն համացանցային պորտալում եւ (կամ) էլեկտրոնային առեւտրային հարթակում (էլեկտրոնային հարթակ), եթե դա նախատեսվում է անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ:

Աճուրդում հաղթող է ճանաչվում այն հնարավոր մատակարարը, որը գնման պայմանագրի ամենացածր գինն է առաջարկել եւ համապատասխանում է աճուրդի մասին փաստաթղթերի պահանջներին:

8. Աճուրդն իրականացվում է՝ հաշվի առնելով հետեւյալ պահանջները՝

1) աճուրդի մասին փաստաթղթերի հաստատում,

2) աճուրդային հանձնաժողովի կազմի հաստատում,

3) էլեկտրոնային առեւտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) եւ (կամ) համացանցային պորտալում աճուրդի անցկացման եւ աճուրդի անցկացման մասին փաստաթղթերի հրապարակում (տեղադրում)՝ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված ժամկետներում, սակայն ոչ ուշ, քան աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 15 օրացուցային օր առաջ: Աճուրդի իրականացման մասին ծանուցագրում եւ (կամ) աճուրդի մասին փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում՝ աճուրդին մասնակցության հայտեր ներկայացնելու ժամկետը երկարաձգվում է այնպես, որ կատարված փոփոխությունները էլեկտրոնային առեւտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) եւ (կամ) համացանցային պորտալում հրապարակելու (տեղադրելու) օրվանից մինչեւ աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետն ընկած ժամանակահատվածը կազմի առնվազն 7 օրացուցային օր: Ընդ որում, գնման պայմանագրի առարկայի փոփոխություն չի թույլատրվում: Եթե անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսվում է գնման

պայմանագրի այնպիսի մեկնարկային (առավելագույն) գին (գնման կողմնորոշիչ արժեք), որի պարագայում հնարավոր է աճուրդն անցկացնել նախատեսվածից ավելի սեղմ ժամկետում, ապա անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող են սահմանվել աճուրդին մասնակցության հայտեր ներկայացնելու ավելի սեղմ ժամկետներ, քան նախատեսված է սույն ենթակետով, սակայն ոչ պակաս, քան 7 օրացուցային օր մինչեւ աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալը, իսկ աճուրդի մասին փաստաթղթերում փոփոխություններ կատարելու դեպքում՝ ոչ պակաս, քան 3 օրացուցային օր մինչեւ աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալը՝ էլեկտրոնային առեւտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) եւ (կամ) համացանցային պորտալում այդ փոփոխությունները հրապարակելու (տեղադրման) օրվանից,

4) աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի դրույթների պարզաբանում եւ այդպիսի պարզաբանումների հրապարակում (տեղադրում) էլեկտրոնային առեւտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) եւ (կամ) համացանցային պորտալում՝ ոչ ուշ, քան աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 3 օրացուցային օր առաջ: Հարցման հիման վրա աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի դրույթների պարզաբանումն իրականացվում է այն դեպքում, երբ հարցումն ստացվում է ոչ ուշ, քան աճուրդին մասնակցության հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուց 5 օրացուցային օր առաջ,

5) էլեկտրոնային փաստաթղթի ձեւով աճուրդին մասնակցության հայտերի ներկայացում էլեկտրոնային առեւտրային հարթակ (էլեկտրոնային հարթակ) կամ համացանցային պորտալ ,

6) աճուրդին մասնակցության հայտերի բացում եւ ուսումնասիրություն աճուրդային հանձնաժողովի կողմից՝ սույն կետի 8-րդ ենթակետում նշված ընթացակարգին հնարավոր մատակարարների մասնակցությունը թույլատրելու

մասով աճուրդի վերաբերյալ փաստաթղթերի պահանջներին համապատասխանող հայտերը որոշելու համար,

7) աճուրդին մասնակցության հայտերի բացման, ուսումնասիրության եւ սույն կետի 8-րդ ենթակետում սահմանված ընթացակարգին հնարավոր մատակարարների մասնակցության թույլատրման վերաբերյալ արձանագրությունների հրապարակում (տեղադրում) էլեկտրոնային առեւտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) եւ (կամ) համացանցային պորտալում եւ հայտերի բացման, ուսումնասիրության եւ մասնակցության թույլտվության արդյունքների մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան աճուրդային հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումներ ընդունելու օրվան հաջորդող օրը,

8) գնման պայմանագրի մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) նվազեցման ընթացակարգի անցկացում գնի նվազեցման նպատակով անցկացվող աճուրդի միջոցով: Ընդ որում, անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ կարող է նախատեսվել, որ գնման պայմանագրի գինը մինչեւ մեկնարկային (առավելագույն) գնի (գնման կողմնորոշիչ արժեքի) 0,5 տոկոս եւ դրանից ցածր նվազեցնելու դեպքում աճուրդը շարունակվում է գնման պայմանագրի գնի բարձրացմամբ, որն այդ դեպքում պատվիրատուին վճարում է մատակարարը,

9) սույն կետի 8-րդ ենթակետում նշված ընթացակարգի արդյունքների վերաբերյալ արձանագրության հրապարակում (տեղադրում) էլեկտրոնային առեւտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) եւ (կամ) համացանցային պորտալում եւ այդ ընթացակարգի մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ դրա ավարտվելու օրը,

10) սույն կետի 8-րդ ենթակետում նշված ընթացակարգին մասնակցած հնարավոր մատակարարների աճուրդին մասնակցության հայտերի ուսումնասիրություն աճուրդային հանձնաժողովի կողմից՝ աճուրդի վերաբերյալ փաստաթղթերով նախատեսված պահանջներին համապատասխանող հնարավոր մատակարարներին եւ աճուրդի հաղթողին որոշելու համար, ինչպես նաեւ էլեկտրոնային առեւտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) եւ (կամ) համացանցային պորտալում այդ մասին արձանագրության հրապարակում (տեղադրում) եւ այդ քննարկման արդյունքների ու աճուրդում հաղթողի որոշման մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան աճուրդային հանձնաժողովի կողմից համապատասխան որոշումներն ընդունելու օրվան հաջորդող օրը,

11) աճուրդում հաղթող ճանաչված՝ հնարավոր մատակարարի կողմից ներկայացված աճուրդին մասնակցության հայտով եւ աճուրդի մասին փաստաթղթերով սահմանված պայմաններով, սույն կետի 8-րդ ենթակետում նշված ընթացակարգի արդյունքների վերաբերյալ արձանագրության համաձայն այդ հնարավոր մատակարարի գնման պայմանագրի գնով գնման պայմանագրի կնքում՝ աճուրդում հաղթող ճանաչելու մասին որոշումն ընդունելու օրվանից ոչ շուտ, քան 10 օրացուցային կամ աշխատանքային օր հետո, սակայն ոչ ուշ, քան 30 օրացուցային օր հետո, կամ անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում աճուրդը չկայացած ճանաչելու վերաբերյալ որոշման ընդունում: Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նաեւ սահմանվում են պատվիրատուի եւ հնարավոր մատակարարի միջեւ գնման պայմանագիր կնքելու կարգն ու հերթականությունը՝ ելնելով գնման պայմանագրի ամենացածր գինն առաջարկած հնարավոր մատակարարի հետ գնման պայմանագիր կնքելու անհրաժեշտությունից, ինչպես նաեւ պատվիրատուի գործողությունների կարգը՝ աճուրդը չկայացած ճանաչելու դեպքում,

12) էլեկտրոնային առեւտրային հարթակում (էլեկտրոնային հարթակում) եւ (կամ) համացանցային պորտալում աճուրդի արդյունքների մասին տեղեկությունների հրապարակում (տեղադրում) եւ աճուրդային հանձնաժողովի կողմից աճուրդի արդյունքների մասին յուրաքանչյուր հնարավոր մատակարարի տեղեկացում՝ ոչ ուշ, քան համապատասխան որոշումներն ընդունելու օրվան հաջորդող օրը:

9. Անդամ պետության՝ գնումների մասին օրենսդրությամբ նախատեսված լինելու դեպքում թույլատրվում է առանց մատակարարի ընտրությունը կարգավորող նորմերի կիրառման գնումների իրականացումը եւ դրա հետ գնման պայմանագրի կնքումը: Ընդ որում, Գնումների կարգավորման կարգի մասին արձանագրության 3-րդ հավելվածով նախատեսված դեպքերում այդպիսի գնումներն իրականացվում են անդամ պետության քաղաքացիական օրենսդրության համապատասխան («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25-րդ հավելված):

10. Մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կապալառուից, կատարողից) կատարվող գնումն իրականացվում է գնման պայմանագրի գնի հաշվարկի եւ հիմնավորման առկայության դեպքում:

Մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից գնելու մասին տեղեկատվության տեղադրման մասով պահանջները սահմանվում են անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ:

Հավելված 2

«Գնումների կարգավորման
կարգի մասին»
արձանագրության

Առաջարկների հարցում անցկացնելու եղանակով գնումներ իրականացնելու դեպքերի ցանկ

1. Գնման պայմանագրի առարկա հանդիսացող ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների գնումների իրականացում, որը դադարեցվել է պատվիրատուի կողմից, հաշվի առնելով «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության 22–րդ կետի պահանջները (Եվրասիական տնտեսական միության պայմանագրի 25–րդ հավելված): Ընդ որում, եթե մինչ գնման պայմանագրի դադարեցումը մատակարարը մասնակիորեն կատարել է գնման պայմանագրով նախատեսված պարտականությունները, ապա գնման նոր պայմանագրի կնքման դեպքում՝ ըստ սույն կետի, մատակարարվող ապրանքի քանակը, կատարվող աշխատանքի կամ մատուցվող ծառայության ծավալը պետք է նվազեցվեն, հաշվի առնելով դադարեցված գնման պայմանագրով մատակարարված ապրանքի քանակը, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության ծավալը, իսկ գնման մասին պայմանագրի արժեքը պետք է նվազեցվի մատակարարված ապրանքի քանակի, կատարված աշխատանքի կամ մատուցված ծառայության համամասնությամբ:

2. Բժշկական հանձնաժողովի որոշմամբ, բժշկական ցուցանիշների առկայության դեպքում, բուժվող հիվանդին նշանակելու համար՝ հիվանդի բժշկական քարտում եւ բժշկական հանձնաժողովի մատյանում ամրագրված

անհրաժեշտ դեղամիջոցների գնումների իրականացում: Ընդ որում, գնվող դեղամիջոցների ծավալը չպետք է գերազանցի բուժվելու ընթացքում հիվանդին անհրաժեշտ դեղամիջոցների ծավալը: Բացի դրանից՝ սույն կետի համաձայն գնումներ իրականացնելու դեպքում, երկու կամ ավելի հիվանդների նշանակման համար նախատեսված դեղամիջոցները չեն կարող գնման մասին մեկ պայմանագրի առարկա լինել:

Հավելված 3

«Գնումների կարգավորման
կարգի մասին»
արձանագրության

Մեկ աղբյուրից կամ մեկ մատակարարից (կատարողից, կապալառուից) իրականացվող գնումների դեպքերի ցանկ

1. Այնպիսի ծառայությունների գնում, որոնք առնչվում են բնական մենաշնորհների գործունեության ոլորտին՝ բացառությամբ հեղուկ գազի իրացման, ինչպես նաեւ անդամ պետության օրենսդրությամբ կարգավորվող գներով (սակագներով) ինժեներա-տեխնիկական ապահովման ցանցերի միացման, էներգամատակարարման կամ էլեկտրական էներգիայի երաշխավորված մատակարարի հետ էլեկտրական էներգիայի առքուվաճառքի ծառայությունների:

2. Թմրամիջոցների եւ հոգեմետ նյութերի պահպանման ու ներմուծման (արտահանման) ծառայությունների գնում:

3. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված գներով (սակագներով):

4. Մշակութային արժեքների, այդ թվում՝ թանգարանային իրերի եւ թանգարանային հավաքածուների, ինչպես նաեւ հազվագյուտ եւ արժեքավոր հրատարակումների, ձեռագրերի, արխիվային փաստաթղթերի մատակարարում՝ ներառյալ պատմական, գեղարվեստական կամ այլ մշակութային նշանակություն ունեցող օրինակները, որոնք նախատեսված են պետական թանգարանային,

գրադարանային, արխիվային հիմնադրամների, կինո-, լուսանկարչական հիմնադրամների եւ այլ նմանատիպ հիմնադրամների համալրման համար:

5. Մոբիլիզացիոն նախապատրաստական աշխատանքների կատարում:

6. Անդամ պետության օրենսդրական ակտերով սահմանված կոնկրետ անձից ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, ինչպես նաեւ այնպիսի ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, որոնց կատարումը կամ մատուցումը կարող է իրականացվել բացառապես գործադիր իշխանության մարմինների կողմից, համաձայն դրանց լիազորությունների կամ դրանց ենթակա պետական հիմնարկների, պետական (ունիտար) ձեռնարկությունների, իրավաբանական անձանց կողմից, պետությանը պատկանող (մասնակցության բաժնեմասերի) քվեարկող բաժնետոմսերի հարյուր տոկոսով, որոնց (բոլոր վերը թվարկված կազմակերպությունների) համապատասխան լիազորությունները սահմանվում են անդամ պետության օրենսդրական եւ անդամ պետության ղեկավարի ակտերով:

7. Որոշակի ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում՝ անհաղթահարելի ուժի, այդ թվում՝ արտակարգ իրավիճակի (արտակարգ իրավիճակների տեղայնացման եւ (կամ) հետեւանքների վերացման), վթարի, շտապ բուժօգնության միջամտության անհրաժեշտության դեպքում, որի կապակցությամբ ժամանակի ծախս պահանջող այլ գնումների միջոցների կիրառումն աննպատակ է:

8. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում՝ քրեակատարողական համակարգի հիմնարկներից եւ ձեռնարկություններից, բուժարտադրական (աշխատանքային) բուժական պրոֆիլակտիկ հիմնարկներից եւ բուժարտադրական (աշխատանքային) արհեստանոցներից, ինչպես նաեւ հաշմանդամների հասարակական միավորումների կողմից ստեղծված այնպիսի

կազմակերպություններից, որոնցում հաշմանդամների թիվը կազմում է աշխատակիցների ցուցակային թվի առնվազն 50 տոկոսը:

9. Պատիժ կատարող հիմնարկների կողմից, դատապարտյալներին աշխատանքի տեղավորելու նպատակով՝ ապրանքների արտադրման, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման համար հումքի, նյութերի եւ համալրող իրերի ձեռքբերում՝ իրավաբանական անձանց հետ կնքված պայմանագրերի հիման վրա, պայմանով, որ նշված հիմնարկների կողմից հումքի, նյութերի ու համալրող իրերի ձեռքբերումն իրականացվում է նշված պայմանագրերով նախատեսված միջոցների հաշվին:

10. Գնումներ, որոնք ճանաչվել են չկայացած՝ գնումների ընթացակարգերի արդյունքներով (անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանված դեպքերում):

11. Կապի ծառայություններ ազգային պաշտպանության եւ ազգային անվտանգության կարիքների, ինչպես նաեւ իրավակարգի ապահովման համար:

12. Գնումների առավելագույն գումարի սահմանումը (կամ սահմանային եռամսյակային կամ տարեկան ծավալը), որը կարող է որոշվել անդամ պետության օրենսդրությամբ, եւ որի դեպքում թույլատրվում է գնումներ իրականացնել մեկ աղբյուրից կամ միակ մատակարարից (կատարողից, կապալառուից), ընդ որում՝ նշված չափը չպետք է կրի անհատական բնույթ (անդամ պետությունները ձգտում են նվազագույնի հասցնել նշված շեմը՝ հնարավոր մատակարարների մուտքը գնումներին առավելագույնս ընդլայնելու նպատակով):

13. Սպառազինության եւ ռազմական տեխնիկայի մատակարարման համար պատվերի տեղաբաշխում՝ մեկ մատակարարից, անդամ պետության օրենսդրության համաձայն, ինչպես նաեւ սպառազինության, ռազմական եւ հատուկ տեխնիկայի

վերանորոգման (արդիականացման) աշխատանքների ու ծառայությունների ձեռքբերում:

14. Կոնկրետ գնում հնարավոր մատակարարից՝ անդամ պետության ղեկավարի որոշմամբ կամ հանձնարարությամբ, անդամ պետության պետական իշխանության բարձրագույն մարմնի կողմից՝ պետության ղեկավարի որոշմամբ կամ հանձնարարությամբ սահմանված: Այդպիսի ակտերի ընդունմանն առնչվող որոշումներն ու գործողություններն իրականացվում են «Գնումների կարգավորման կարգի մասին» արձանագրության 32–րդ եւ 33–րդ կետերով նախատեսված կարգով («Եվրասիական տնտեսական միության մասին» պայմանագրի 25–րդ հավելված):

15. Որոշակի հեղինակների գրականության եւ արվեստի ստեղծագործությունների ձեռքբերում՝ բացառությամբ վարձույթի նպատակով կինոնախագծերի ձեռքբերման դեպքերի, կոնկրետ կատարողների կատարումների, կոնկրետ արտադրողների ձայնագրվածքների, այն դեպքում, եթե այդպիսի ստեղծագործությունների, կատարումների եւ ձայնագրվածքների բացառիկ իրավունքները պատկանում են մեկ անձի:

16. Որոշակի պարբերականների եւ էլեկտրոնային հրատարակումների բաժանորդագրումը, ինչպես նաեւ որոշակի հեղինակների տպագիր եւ էլեկտրոնային հրատարակումների գնումը, էլեկտրոնային հրատարակումներին մուտքի ապահովման գծով ծառայությունների մատուցումը՝ նման տպագիր եւ էլեկտրոնային հրատարակությունների հրատարակիչների կողմից, պետական եւ համայնքային կրթական հիմնարկների, պետական եւ համայնքային գրադարանների, պետական գիտական կազմակերպությունների գործունեությունն ապահովելու նպատակով, այն դեպքում, եթե նշված հրատարակիչներին են պատկանում նման հրատարակություններն օգտագործելու բացառիկ իրավունքները:

17. Կենդանաբանական այգու, թատրոնի, կինոթատրոնի, համերգի, կրկեսի, թանգարանի, ցուցահանդեսի եւ սպորտային միջոցառումների մասնակցության պատվերի տեղաբաշխում, ինչպես նաեւ գնման պայմանագրի կնքում մուտքի տոմսերի եւ բաժանորդագրերի՝ թատերատեսարանային, մշակութալուսավորչական ու տեսա–զվարճալի միջոցառումների մասնակցության, էքսկուրսիոն տոմսերի եւ ուղեգրերի իրացման համար:

18. Ցուցահանդեսների, սեմինարների, համաժողովների, նիստերի, ֆորումների, գիտաժողովների, վերապատրաստման դասընթացների նյութերի ձեռքբերում եւ նման միջոցառումներում մասնակցությունների համար վճարումների կատարում, ինչպես նաեւ ծառայություններ մատուցելու գնման պայմանագրի կնքում՝ միջոցառման մասնակցության դեպքում, որն անցկացվում է մի քանի պատվիրատուների կարիքների համար, անդամ պետության օրենսդրությամբ սահմանված կարգով, իրականացված միջոցառման կազմակերպչի՝ պատվիրատուի կողմից սահմանված մատակարարի (կատարողի, կապալառուի) հետ:

19. Ֆիզիկական անձանցից դասախոսական, ինչպես նաեւ էքսկուրսավարի (գիդի) ծառայությունների գնում:

20. Թատերատեսարանային կազմակերպության, թանգարանի, ակումբային հաստատության, կինեմատոգրաֆիայի կազմակերպության, այլ մշակութային կազմակերպության, մշակութային ոլորտում կրթական հաստատության, հեռուստառադիոհաղորդման հիմնարկի պատվերի տեղաբաշխում, կոնկրետ ֆիզիկական անձի կամ կոնկրետ ֆիզիկական անձանց՝ սցենարի հեղինակի, արտիստ-կատարողի, բալետմեյստերի, հեռուստա– կամ ռադիոծրագրի հաղորդավարի, դիզայների, դիրիժորի, թատերագրի, մարզչի, կոմպոզիտորի, կոնցերտմեյստերի, լիբրետիստի, կինո-, տեսա-, ձայնագրման օպերատորի, գրողի, բանաստեղծի, ռեժիսորի, դասուսույցի, քանդակագործի, պարուսույցի, երգչախմբի ղեկավարի եւ նկարչի կամ այլ ստեղծագործական աշխատողի՝գրականության կամ

արվեստի արգասիքների ստեղծման կամ կատարման համար, ինչպես նաեւ կոնկրետ ֆիզիկական անձից, այդ թվում՝ անհատ ձեռնարկատերից, կամ իրավաբանական անձից՝ դեկորացիաների, բեմական կահույքի, բեմական հագուստի (այդ թվում՝ գլխարկների եւ կոշիկների) ու դեկորացիաների եւ հագուստի պատրաստման համար անհրաժեշտ նյութերի, ինչպես նաեւ թատերական ռեկվիզիտի, շինծու իրերի, գրիմի, կեղծամների, թատերական տիկնիկների պատրաստման եւ տեղադրման՝ նախատեսված սույն կետում նշված կազմակերպությունների կողմից ստեղծագործությունների ստեղծման կամ կատարման համար:

21. Կապիտալ շինարարության օբյեկտների նախագծային փաստաթղթերի մշակման հեղինակային վերահսկողության, կապիտալ շինարարության օբյեկտների շինարարության, վերակառուցման եւ կապիտալ վերանորոգման հեղինակային վերահսկողության ծառայությունների գնում՝ համապատասխան հեղինակների կողմից:

22. Անդամ պետությունների ժողովուրդների մշակութային ժառանգության (պատմական եւ մշակութային հուշարձանների) օբյեկտների պահպանման աշխատանքների տեխնիկական ու հեղինակային վերահսկողության անցկացման պատվերի տեղաբաշխում:

23. Ծառայությունների գնում, որոնք կապված են աշխատակցին ծառայողական գործուղման ուղարկելու, աշակերտներին, ուսանողներին, ասպիրանտներին՝ ստեղծագործական մրցույթներում (մրցակցությունների, օլիմպիադաների, ֆեստիվալների, խաղերի), ցուցահանդեսներում, պլեներներում, կոնֆերանսներում, ֆորումներում, վարպետության դասերին, ստաժավորումներին մասնակցություն, ուսուցողական գործնական առաջադրանքների կատարում ապահովելու հետ՝ ներառյալ դեպի նշված միջոցառումների վայր եւ հետ վերադարձի ճանապարհածախսը, բնակելի տարածքի վարձույթը, տրանսպորտային

սպասարկումը, սննդի ապահովումը, ինչպես նաեւ ներկայացուցչական ծախսերի հետ կապված՝ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերումը:

24. Օտար երկրների ղեկավարների, օտարերկրյա պետությունների կառավարությունների ղեկավարների, միջազգային կազմակերպությունների, խորհրդարանական պատվիրակությունների, կառավարական պատվիրակությունների, օտարերկրյա պատվիրակությունների (հյուրանոցային, տրանսպորտային ապահովման, համակարգչային սարքավորումների շահագործման, սննդի ապահովման) ղեկավարների այցերի ապահովման հետ կապված ծառայությունների մատուցման պատվերի տեղաբաշխում:

25. Անդամ պետության ղեկավարի, այլ պաշտպանվող անձանց կացության համար նախատեսված օբյեկտների (կենցաղային, հյուրանոցային, տրանսպորտային սպասարկում, համակարգչային սարքավորումների շահագործում, սանիտարահամաճարակաբանական բարեկեցություն, անվտանգ սննդի տրամադրում), պաշտպանվող անձանց պաշտպանությունն ու անվտանգությունն ապահովելու համար անհրաժեշտ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների, ինչպես նաեւ անդամ պետության ղեկավարի գործունեության տեղեկատվական սպասարկման եւ տեսաարխիվի ձեւավորման ծառայությունների ձեռքբերում:

26. Պետական եւ մոբիլիզացիոն նյութական պահուստներից իրացվող նյութական արժեքների գնում:

27. Որոշակի մատակարարից գնումներ իրականացնող պատվիրատուի մոտ այդպիսի ապրանքների լրացուցիչ քանակի պահանջմունքի առաջացում, ընդ որում՝ լրացուցիչ գնվող ապրանքի քանակը չի կարող գերազանցել գնման պայմանագրով նախատեսված ապրանքների 10 տոկոսը (լրացուցիչ մատակարարվող ապրանքի միավորի գինը պետք է որոշվի որպես պայմանագրի սկզբնական

գնի՝պայմանագրում նախատեսված այդպիսի ապրանքի քանակի վրա բաժանման արդյունք):

28. Բազմաբնակարանային շենքի կառավարման ծառայությունների գնման իրականացում՝ բազմաբնակարան շենքի սեփականատերերի կողմից՝ տարածքի ընտրության հիման վրա, կամ տեղական ինքնակառավարման մարմնի կողմից՝ կառավարող կազմակերպության բնակարանային օրենսդրության համաձայն, եթե տարածքները բազմաբնակարան շենքում գտնվում են մասնավոր, պետական կամ մունիցիպալ սեփականության ներքո:

29. Գնման մասին պայմանագրի կնքում, որի առարկան ոչ բնակելի նշանակություն ունեցող շենքերի, կառույցների, շինությունների, սենքերի ձեռքբերումն է, անդամ պետության օրենսդրության համապատասխան ակտով սահմանված,ինչպես նաեւ ոչ բնակելի նշանակություն ունեցող շենքերի, կառույցների, շինությունների, սենքերի վարձակալումը, վարձակալվող տարածքի տեխնիկական պահպանման, պաշտպանության եւ սպասարկման ծառայությունների գնումը,պետական կամ մունիցիպալ պատվիրատուին անհատույց օգտագործման համար փոխանցված մեկ կամ մի քանի ոչ բնակելի տարածքների տեխնիկական ապահովման, պահպանման եւ սպասարկման ծառայությունների գնումը, այն դեպքում, եթե այդ ծառայությունները մատուցվում են այլ անձի կամ անձանց, որոնք օգտվում են շենքում գտնվող ոչ բնակելի սենքերից՝ անհատույց օգտագործման եւ (կամ) գործառական կառավարման համար:

30. Ամենօրյա եւ (կամ) ամենշաբաթյա պահանջմունքի գնումների իրականացման անհրաժեշտությունը՝ գնումների արդյունքների ամփոփման եւ գնումների մասին պայմանագիրն ուժի մեջ մտնելու ժամանակաշրջանի համար, այն դեպքում, եթե նման գնումն իրականացվում է անդամ պետության օրենսդրությամբ սահմանված տարվա 1-ին ամսվա ընթացքում: Այս դեպքում գնման ծավալը չի կարող գերազանցել ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների քանակը,

որն անհրաժեշտ է պատվիրատուի պահանջմունքի բավարարման համար գնումը կատարելու ժամկետի ընթացքում, սակայն 2 ամսից ոչ ավելի ժամանակահատվածում:

31. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում օպերատիվ-հետախուզական, քննչական գործունեություն իրականացնելու համար՝ դրանք իրականացնող իրավասու մարմինների կողմից, անդամ պետության օրենսդրության համաձայն՝ պետական պաշտպանության ենթակա անձանց անվտանգության ապահովման, ինչպես նաեւ անհրաժեշտ գիտատեխնիկական կամ այլ հատուկ գիտելիքներով պաշտոնատար անձանց ու մասնագետների ծառայությունների կատարման համար:

32. Բնօգտագործման իրավունքի ձեռքբերում:

33. Արտասահմանում աշխատակիցների նախապատրաստման, վերապատրաստման եւ որակավորման բարձրացման ծառայությունների ձեռքբերում:

34. Վարկանիշային գործակալությունների եւ ֆինանսական ծառայությունների ձեռքբերում:

35. Կույր եւ թույլ տեսողությամբ քաղաքացիների մասնագիտացված գրադարանների ծառայությունների ձեռքբերում:

36. Արժեթղթերի եւ իրավաբանական անձանց կանոնադրական կապիտալում մասնակցության ձեռքբերում:

37. Անդամ պետությունում ընտրությունների, հանրաքվեների անցկացման համար նախատեսված ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում՝ սահմանված անդամ պետության օրենսդրությամբ:

38. Անդամ պետությունների միջազգային պայմանագրերով ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում՝ ըստ անդամ պետության գործադիր իշխանության գերագույն մարմնի կողմից հաստատված ցանկի, ինչպես նաեւ ներդրումային նախագծերի իրացման շրջանակներում, որոնք ֆինանսավորվում են այն միջազգային ընկերությունների կողմից, որոնց անդամակցում է այդ պետությունը:

39. Պայմանագրի կնքում՝ սահմանագծման, սահմանազատման եւ պետական սահմանագծի անցման ստուգման՝ գեոդեզիական, քարտեզագրական, տեղագրական եւ հիդրոգրաֆիկական ապահովում, ինչպես նաեւ անդամ պետության միջազգային պարտավորությունների կատարման նպատակով՝ ծովային տարածության սահմանագծում:

40. Անդամ պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնին՝ պետությունների, պետությունների կառավարությունների, միջազգային եւ պետական կազմակերպությունների, օտարերկրյա ոչ կառավարական հասարակական կազմակերպությունների եւ հիմնադրամների կողմից, (որոնց գործունեությունը կրում է բարեգործական եւ միջազգային բնույթ) անհատույց հիմքով տրվող դրամաշնորհների գումարների, ինչպես նաեւ այդ դրամաշնորհների համաֆինանսավորման համար հատկացվող գումարների օգտագործման հետ կապված՝ ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, այն դեպքում, երբ դրանց տրամադրման համաձայնագրերում նախատեսված են ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերման այլ ընթացակարգեր:

41. Ֆիզիկական անձի համար պետական կրթական պատվերի հետ կապված ծառայությունների ձեռքբերում (այն դեպքում, եթե ֆիզիկական անձն ինքնուրույն է ընտրել կրթական կազմակերպությունը):

42. Անդամ պետությունների քաղաքացիների՝ արտասահմանում բուժման ծառայությունների, ինչպես նաեւ նրանց փոխադրման եւ ուղեկցման ծառայությունների ձեռքբերում:

43. Մտավոր սեփականության առարկա հանդիսացող ապրանքների եւ ծառայությունների ձեռքբերում այն անձանցից, որոնք ձեռք բերվող ապրանքների եւ ծառայությունների նկատմամբ ունեն բացառիկ իրավունքներ:

44. Անդամ պետությունների արտասահմանյան հիմնարկների, ինչպես նաեւ նրանց անունից գործող պատվիրատուների առանձնացված ստորաբաժանումների կողմից ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռքբերում՝ օտարերկրյա պետության տարածքում իրենց գործունեությունն ապահովելու, ինչպես նաեւ խաղաղարական գործողությունների կատարման նպատակով:

45. Միջազգային տեղեկատվական կազմակերպություններից տեղեկությունների տրամադրման ծառայությունների ձեռքբերում:

46. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են դրամավարկային գործունեության, ինչպես նաեւ անդամ պետության ազգային հիմնադրամի եւ կենսաթոշակային ակտիվների կառավարման գծով գործունեություն իրականացնելու համար:

47. Միջազգային առեւտրային արբիտրաժներում եւ արտասահմանյան դատական մարմիններում պետության կամ պատվիրատուների շահերը պաշտպանելու եւ ներկայացնելու գծով խորհրդատվական ու իրավաբանական ծառայությունների ձեռքբերում:

48. Անդամ պետության օրենսդրությամբ սահմանված անձից ծառայությունների ձեռքբերում՝ ըստ գույքի հավատարմագրային կառավարման:

49. Վիճակագրական դիտարկումների տվյալների մշակման ծառայությունների ձեռքբերում:

50. Դատական ակտերի կատարողների կողմից այն սակարկություններում (աճուրդներում) իրացվող գույքի (ակտիվների) ձեռքբերում՝ համաձայն յուրաքանչյուր անդամ պետության կատարողական վարույթի մասին օրենսդրության, որոնք անցկացվում են անդամ պետության սնանկության մասին օրենսդրության, հողային օրենսդրության համաձայն եւ պետական գույքի սեփականաշնորհման ժամանակ:

51. Ծառայությունների ձեռքբերում՝ մատուցված փաստաբանների կողմից, դրանց վճարումներից ազատված անձանց՝ անդամ պետության օրենսդրության համաձայն:

52. Ապրանքների ձեռքբերում՝ պետական նյութական պահուստ, անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքում շուկայի վրա կարգավորող ազդեցություն գործելու նպատակով:

53. Պետական նյութական պահուստի նյութական արժեքների պահպանման ծառայությունների ձեռքբերում:

54. Տիեզերագնացների նախապատրաստման եւ դեպի տիեզերք թռիչքների իրականացումը կազմակերպող ծառայությունների ձեռքբերում՝ անդամ պետության օրենսդրությամբ սահմանված դեպքում, ինչպես նաեւ տիեզերական ապարատների նախագծման, հավաքման եւ փորձարկման ծառայություններ:

55. Մասնագիտացված ավիավերանորոգման ձեռնարկություններում ավիացիոն տեխնիկայի վերանորոգման ծառայությունների ձեռքբերում:

56. Պետական եւ գերատեսչական պարգեւների ու դրանց վերաբերող փաստաթղթերի, անդամ պետության օրենսդրական մարմնի պատգամավորի կրծքանշանի եւ դրան վերաբերող փաստաթղթի, պետական հավատարմական

դրոշմների, անձնագրերի (այդ թվում՝ ծառայողական եւ դիվանագիտական), անդամ պետության քաղաքացու անձի հաստատման, անդամ պետությունում օտարերկրացու կացության քարտի, քաղաքացիություն չունեցող անձի վկայականի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման վկայականի պատրաստման ծառայությունների ձեռքբերում, ինչպես նաեւ գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից հաստատված ցանկով՝ անդամ պետության գործադիր իշխանության բարձրագույն մարմնի կողմից սահմանված մատակարարներից հատուկ պաշտպանության աստիճան պահանջող տպագիր արտադրանքի ձեռքբերում:

57. Թանկարժեք մետաղների եւ թանկարժեք քարերի գնում՝ թանկարժեք մետաղների ու թանկարժեք քարերի պետական ֆոնդի համալրման համար:

58. Ծանր աշխատանք կատարող, աշխատանքային վնասակար (ծայրահեղ վնասակար) եւ (կամ) վտանգավոր պայմաններում, ինչպես նաեւ ծայրահեղ վտանգի, մեքենաների եւ մեխանիզմների հետ կապված աշխատավայրերում աշխատող աշխատակիցների պարտադիր բժշկական զննման ծառայությունների ձեռքբերում:

59. Սպորտային գույքի եւ սարքավորումների (առարկաների), սպորտային հանդերձանքի ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են անդամ պետության սպորտային ազգային եւ հավաքական թիմերի մասնակցության եւ (կամ) պատրաստման համար, ինչպես նաեւ անդամ պետության սպորտային ազգային եւ հավաքական թիմերի՝ օլիմպիական, պարալիմպիկ, սուրդլիմպիկ եւ այլ միջազգային սպորտային միջոցառումներին մասնակցության համար՝ այդ ոլորտում կարգավորում իրականացնող պետական կառավարման մարմնի կողմից հաստատված օրացուցային պլանի հիման վրա:

60. Անդամ պետության ղեկավարի կամ անդամ պետության կառավարության պահուստից անհետաձգելի ծախսերի համար հատկացված միջոցների հաշվին ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, այնպիսի իրավիճակների դեպքում, որոնք սպառնում են տվյալ անդամ պետության կամ դրա վարչատարածքային միավորի քաղաքական, տնտեսական կամ սոցիալական կայունությանը:

61. Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ձեռքբերում, որոնք անհրաժեշտ են իրավապաշտպան եւ հատուկ պետական մարմինների հատուկ նշանակության ստորաբաժանումների գործունեության ապահովման համար՝ կապված պայթուցիկ նյութերի եւ սարքերի բացահայտման ու վնասազերծման, հակաահաբեկչական գործողությունների անցկացման, ինչպես նաեւ պատանդների ազատագրման, զինված հանցագործների, ծայրահեղականների, ահաբեկիչների, կազմակերպված հանցագործ խմբավորումների անդամների, ծայրահեղ կամ առավել ծայրահեղ հանցագործների կալանավորման եւ վնասազերծման հետ:

62. Հատուկ սոցիալական ծառայությունների ձեռքբերում՝ նախատեսված հատուկ սոցիալական ծառայությունների երաշխավորված ծավալով, որը տրամադրվում է այն անձանց (այդպիսի անձանցից բաղկացած (ընտանիքներին), որոնք ունեն ֆիզիկական եւ (կամ) մտավոր հնարավորություններով պայմանավորված՝ օրգանիզմի ֆունկցիաների հաստատուն խախտումներ,եւ (կամ) անձանց՝ առանց հստակ բնակության վայրի, ինչպես նաեւ այն անձանց, որոնք ի վիճակի չեն ինքնասպասարկման՝ զառամյալ հասակի հետ կապված, ինչպես նաեւ հատուկ սոցիալական ծառայությունների անհրաժեշտության սահմանման եւ գնահատման ծառայությունների ձեռքբերում:

63. Ազգային գեղարվեստական ստեղծագործական արտադրանքի ձեռքբերում՝ անդամ պետության օրենսդրությամբ նախատեսված դեպքերում:

Հավելված 4

«Գնումների կարգավորման
կարգի մասին»
արձանագրության

Ապրանքների, աշխատանքների եւ ծառայությունների ցանկ, որոնց գնումներն իրականացվում են աճուրդի անցկացման միջոցով

1. Գյուղատնտեսական արտադրանք, որսորդական զբաղմունքի արտադրանք, ծառայություններ գյուղատնտեսության եւ որսորդության մեջ, բացի կենդանի կենդանիներից, որսորդության, վայրի կենդանիների եւ թռչունների բազմացման ու բուծման հետ կապված արտադրանքից եւ ծառայություններից, ինչպես նաեւ վայրի կենդանիների ու թռչունների որսորդության եւ բազմացման արտադրանքից:*

2. Անտառային տնտեսության եւ փայտամթերման արտադրանք, ծառայություններ անտառային տնտեսության եւ փայտամթերման համար:

3. Ձկնորսության, ձկնաբուծարանների եւ ձկնային ֆերմաների արտադրանք, ծառայություններ՝ կապված ձկնորսության հետ:*

4. Քարածուխ եւ լիգնիտ (գորշ ածուխ), տորֆ:

5. Հում նավթ եւ բնական գազ, ծառայություններ դրանց հանույթի վերաբերյալ՝ բացի հետախուզական աշխատանքներից:

6. Մետաղական հանքանյութեր:

7. Քար, կավ, ավազ եւ հանքային հումքերի այլ տեսակներ:

8. Սննդամթերք եւ ըմպելիքներ:*

9. Մանածագործվածք եւ մանածագործական արտադրանք:

10. Հագուստ, մորթի եւ մորթուց պատրաստված արտադրանք՝ բացառությամբ մանկական հագուստի:

11. Կաշի եւ կաշվից արտադրանք, փոկային եւ թամբագործական արտադրանք, կոշկեղեն:

12. Փայտանյութ, արտադրանք փայտանյութից, խցանակեղեւից, փափուկ ծղոտից եւ հյուսվածեղենից՝ բացի կահույքից:

13. Ցելյուլոզա, թուղթ, ստվարաթուղթ եւ դրանցից պատրաստված արտադրանք:

14. Պոլիգրաֆիական եւ տպագիր արտադրանք, բացի գովազդային նյութերից, նկարներից, գծագրերից, տպագրված լուսանկարներից, հուշանվերների եւ նվերների հավաքածուներից (նոթատետրերից եւ գրառումների տետրերից), ընտրություններում եւ հանրաքվեներում քվեարկելու համար նախատեսված քվեաթերթիկներից:

15. Կոքսի վառարանների արտադրանք:

16. Օրգանական եւ անօրգանական սինթեզի արտադրանք:

17. Արտադրանք ռետինից եւ պլաստմասսայից:

18. Այլ ոչ մետաղական հանքային արտադրանք, բացի ապակե տնտեսա-կենցաղային ապրանքներից, կահավորման ապրանքներից, ինչպես նաեւ կավագործական, ոչ շինարարական, ոչ հրակայուն արտադրանքից:

19. Մետաղագործական արդյունաբերության արտադրանք:

20. Մետաղամշակման արտադրանք՝ բացի մեքենաներից, սարքավորումներից, միջուկային ռեակտորներից եւ դրանց մասերից, լիցքավորված մասնիկների արագացուցիչներից:

21. Մեքենաներ եւ սարքավորումներ, որոնք ներգրավված չեն այլ խմբավորումներում՝ բացի զենքից, զինամթերքից եւ դրանց մասերից, ժողովրդատնտեսական նշանակություն ունեցող պայթուցիկ սարքերից ու պայթուցիկ նյութերից:

22. Գրասենյակային եւ հաշվիչ տեխնիկա:

23. Էլեկտրաշարժիչներ եւ էլեկտրատեխնիկական սարքավորումներ (այդ թվում՝ էլեկտրասարքավորումներ), որոնք ներգրավված չեն այլ խմբավորումներում:

24. Սարքավորումներ եւ ապարատուրա ռադիոյի, հեռուստատեսության ու կապի համար:

25. Բժշկական սարքավորումներ եւ ապարատուրա, չափման միջոցներ, լուսանկարչական եւ կինոապարատուրա (բացառությամբ անդամ պետության գնումների մասին օրենսդրությամբ սահմանված՝ բժշկական տեխնիկայի եւ բժշկական նշանակության ապրանքների):

26. Ավտոմեքենաներ, կցասայլեր եւ կիսակցասայլեր, թափքեր ավտոմեքենաների համար, մեքենաների մասեր ու պարագաներ, ավտոտնակների սարքավորումներ:

27. Այլ տրանսպորտային միջոցներ՝ բացի առեւտրային ու մարդատար նավերից, ռազմանավերից, օդային տիեզերական թռչող սարքերից, թռչող սարքերի սարքավորումներից ու մասերից:

28. Պատրաստի արտադրանք՝ բացի ոսկերչական եւ դրանց հետ առնչվող արտադրանքից, երաժշտական գործիքներից, խաղերից եւ խաղալիքներից,

աշխատանքային գործընթացում ուսուցանելու համար սարքավորումներից, ուսումնական ձեռնարկներից եւ դպրոցական սարքավորումներից, գեղարվեստական արհեստների արտադրանքներից, արվեստի գործերից եւ հավաքածուների առարկաներից, ցուցադրական կինոժապավենից, մարդու, կենդանու մազից, սինթետիկ նյութերից եւ դրանցից պատրաստված արտադրանքներից:

29. Թափոններ եւ ջարդոն, որը պիտանի է որպես նոր հումք օգտագործելու համար:

30. Ավտոմեքենաների եւ մոտոցիկլետների առեւտրի, տեխնիկական սպասարկման ու վերանորոգման ծառայություններ:

31. Մեծածախ եւ կոմիսիոն առեւտրի ծառայություններ՝ բացի ավտոմեքենաների եւ մոտոցիկլետների առեւտրի ծառայություններից:

32. Ցամաքային տրանսպորտի ծառայություններ՝ բացի երկաթուղային տրանսպորտի ծառայություններից, մետրոպոլիտենի ծառայություններից, խողովակաշարով փոխադրման ծառայություններից:

33. Ջրային տրանսպորտի ծառայություններ:

34. Օժանդակ եւ լրացուցիչ տրանսպորտային ծառայություններ, տուրիզմի եւ էքսկուրսիաների ոլորտում ծառայություններ՝ բացի ճանապարհորդությունների բյուրոների եւ տուրիստական գործակալությունների, զբոսաշրջիկներին օգնություն ցուցաբերելու վերաբերյալ այլ ծառայություններից:

35. Կապ՝ բացի սուրհանդակային ծառայություններից՝ բացառությամբ ազգային փոստի ծառայությունների, էլեկտրական կապի ծառայությունների:

36. Ֆինանսական միջնորդությանը վերաբերող ծառայություններ՝ բացի ապահովագրության եւ կենսաթոշակային ապահովման, պարտատոմսային փոխառության թողարկման կազմակերպմանը վերաբերող ծառայություններից:

37. Ծառայություններ, որոնք ֆինանսական միջնորդության նկատմամբ օժանդակ են համարվում՝ բացառությամբ գնահատման ծառայությունների:

38. Ծառայություններ գրասենյակների, էլեկտրոնային հաշվիչ մեքենաների եւ դրանց հետ համատեղ օգտագործվող երկրորդական սարքավորման համար օրգտեխնիկայի տեխնիկական սպասարկման եւ վերանորոգման վերաբերյալ:

39. Շենքերի մաքրման ծառայություններ:

40. Փաթեթավորման ծառայություններ:

41. Թափոնների վերացման, սանիտարական մշակման եւ համանման ծառայություններ:

---

* Բացի երեխաների դաստիարակչական, կրթական գործունեություն իրականացնող կազմակերպություններում, բժշկական կազմակերպություններում, սոցիալական ծառայություններ տրամադրող հաստատություններում եւ երեխաների հանգստի կազմակերպություններում գնումներից՝ նշված հաստատությունների եւ կազմակերպությունների համար հանրային սննդի ծառայություններ: